


Գ. ԱՂԱԶԱՆՅԱՆ
Ս. ԿԱՐԱԳՅՈՋՅԱՆ

ԲԱՄԲԱԿԻ ՔԱՂՅԱՆԻ, ԿՈՒՆՏԻՎԱՑԻԱՅԻ
ՈՒ
ՆՈՍՐԱՅՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՐՁՐԱՅՆԵԼ
ԴԱԾՏԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

633

Ա-44

ԳՅՈՒՂՇՐԱՏ



ՑԵՐԵՎԱՆ

18224

6 FEB 2013

04 AUG 2010

633 պ.
Ա-44

Գ. ԱՂԱԶԱՆՅԱՆ

ԲԱՄԲԱԿԻ ՑԱՆՔԵՐԻ ՔԱՂԱՅԱՆՆ ՌԻ ԿՈՒԼՏԻ-
ՎԱՑԻԱՆ

1006
29841

3179

Քաղհանի և կուլտիվացիայի հիմնական նպա-
տակն է՝ պայքարել մոլախոտերի դեմ և ստեղծել
բարենպաստ ոգային, ջրային և մանրառուխ-
ալայմաններ կուլտուրական բույսերի զարգաց-
ման համար: Մոլախոտերի դեմ կռվելու աշխա-
տանքներն սկսվում են նախքան ցանքը և մեծ
եֆեկտ են տալիս, յերբ նրանք կատարվում են
ճիշտ և ժամանակին: Աշնանային խոր վարը,
գարնանն իր ժամանակին և ճիշտ կատարված
կրկնավարն ու փոցիսը, միջնակներից և առուհե-
րի վրայից սխտեմատիկորեն մոլախոտերը փոշը-
նացնելը, ժամանակին կատարված ցանքը և փրկ-
բեցումը, կանխորոշում են բամբակի հետագա
զարգացման ընթացքը և մեծապես հեշտացնում
են ցանքի նկատմամբ կիրառվելիք խնամքը: Հա-

կառակ պատկեր ե ստացվում, յերբ ցա Ջիննա-
խորդող աշխատանքները կատարվում են անփուլթ
և անխնամ: Այս դեպքում բամբակի բերքատու-
թյունը համարյա ամբողջապես պայմանավորված
է լինում ցանքերի խնամքի քանակով և վորա-
կով (քաղհանի, կուլտիվացիայի, ջրի, նոսրաց-
ման):

Քաղհանի և կուլտիվացիայի աշխատանքները
բաժանվում են յերկու մասի.

1. Քաղհան և կուլտիվացիա միջշարքային
տարածություններում.

2. Քաղհան և փխրեցում շարքերում:

Առայժմ յեղած մեքենաներով ու գործիքնե-
րով հնարավոր ե մեքենայացնել միջշարքային
տարածություններում կատարվող աշխատանքնե-
րը, իսկ շարքերում աշխատանքները կատարվում
են ձեռքի հողուբագններով:

Հողի փխրեցումը պիտի անել շուտ, նախքան
բամբակի ծիլերի յերևալը: Յեկաջրից հետո հողը
ճնստում ե» և կեղևակալում: Այս հանգամանքը
հաճախ պատճառ ե դառնում մեծ վնասների,
վորովհետև զրանից սերմերի վորոշ մասը չի
ծլում, ստացվում ե նոսր ցանք և բերքի նվա-
զում: Այդ պատճառով բոլոր դեպքերում, յերբ
կատարված ե «սապսու վար», հողի քեչը դա-

ռն պես պիտի կատարել փոցիս. կամ տափան՝
հողի կեղևը փշրելու, ծլած մուխոտները վոջն-
չացնելու, բամբակի չծլած սերմերը ծլելու և
լավ պայմանների մեջ դնելու համար. փոցիք
պիտի կատարել «զիգ-զազ» փոցիսով:

Յանքից մոտ 20—25 որ հետո, յերբ բույ-
սերն ունենում են, սովորաբար, մեկ—յերկու
իսկական տերև, պիտի կատարել առաջին
քաղհանը և կուլտիվացիան: Դրանց դերն ե՝ փըշ-
րել հողի կեղևը և փխրեցնել այն, վոջնչացնել
միջշարքային տարածություններում և շարքերում
յեղած նորածիլ մուխոտները: Դրա հետևանքը
լինում ե այն, վոր ուժեղանում ե բույսերի ար-
մատային սխտեմի, ապա և վերերկրյա մասերի
ածը:

Շատ կարևոր ե միայն, վորպեսզի այս կուլ-
տիվացիայի ժամանակ հողի շերտը կտրվի և ա-
ռանց շուտ տալու տեղում թողնվի: Դրա համար
կուլտիվատորի սովորական թաթերի փոխարեն
պիտի գործադրել կտրող և սուր դանակներ: Ա-
ռաջին կուլտիվացիան պիտի կատարել նաև այն
հաշվով, վոր կողքերի կտրող դանակները շար-
քերից մոտ 10 սմ. հեռու մնան: Հետագա կուլ-
տիվացիայի ժամանակ ակոսային ջրի դեպքում
կուլտիվատորի վերջին սովորական թաթի փո-

խաբեն պիտի ամրացնել բուկլիցի ձև ունեցող
թաթ, վորը ջրելու համար ակոսներ ե բաց ա-
նում:

Պատաստւելով ուժեղ վարակված արտերում
նախ պիտի շարքերում կատարել ձեռքի քաղհան
և հետո նոր միջարքային տարածությունների
մշակություն: Մնացած բոլոր դեպքերում նախ
պիտի կատարել մշակման աշխատանքները և
ապա նոր սկսել քաղհանը:

Ամեն անգամ ջրելուց հետո հողը կեղև ե
կազմում, վորը զփարացնում ե ողի մուտքը
հողի մեջ և նպաստում ե ջրի գոլորշիացմանը
հողի մակերեսից, իսկ այդ շրջանում ամեն մեկ
պատճառ, վորը պակասեցնում ե թարմ ողի քանակը
հողում, պատճառ ե դառնում նաե բույսերի թուլ-
լարգացման և ապա բերրի անկման: Ահա այդ
տեսակետից մեծ ե կուլտիվացիայի և քաղհանի
(շարքերի մշակման) գերը վեգետացիոն շրունի-
ւրից հետո: Մեծ ե նրա դերը նաե հողի մեջ լեզած
ջուրը խնայողաբար ծախսելու խնդրում: Պնդա-
ցածև կեղևակալած հողում ստեղծվում ե մազական
անցքերի անընդհատ սխտեմ, վորոնց միջով ջուրն
անարգել բարձրանում և գոլորշիանում ե հողի
մակերեսից: Այդ մազական անցքերի խախ-
տումը վորոշ խորությամբ ստեղծում ե հողի

մակերեսի վրա դատիչ շերտ և նվազեցնում ե
խոնավության գոլորշիացումը: Մուխոտերի վո-
շնչացումն ևս մեծ չափով պակասեցնում ե ջրի
գոլորշիացումը:

Կուլտիվացիաների և քաղհանի թիվը կախ-
ված ե վեգետացիոն շրջանում բամբակին արը-
վող ջրի թվից, հողերի մուխոտերով վարակված
լինելու աստիճանից, հողային տիպերի առանձ-
նահատկություններից և այլն: Ամբողջ վեգետա-
ցիայի ընթացքում ցանքերը պիտի քաղհանվեն
4 անգամից փոշ պակաս, իսկ մուխոտերով ու-
ժեղ վարակված հողերում՝ ավելի թվով կուլտի-
վացիա և քաղհան պիտի կատարել: Այդ աշխա-
տանքները պիտի կատարվեն այն հաշվով, վոր
բամբակի ցանքերը միշտ լինեն մուխոտերից
մաքուր և փուխը վիճակում:

Մեզ մոտ այդ աշխատանքներն սկսվում են
հետևյալ հերթականությամբ:

Ցանքից մոտ 20—25 որ հետո սկսվում ե
առաջին քաղհանը և կուլտիվացիան: Այդ աշխա-
տանքն ընկնում ե մայիսի 18-ից մինչև հունիսի
10-ը: Սովորաբար բամբակենին ունենում ե
այդ շրջանում 1—2 իսկական տերև: Ամեն մի
հապաղում այս շրջանում պատճառ ե դառնում
բամբակենու թուլ զարգացման, յերկարացնում
ե նրա վեգետացիան և նվազեցնում ե բերքը:

Յերկրորդ քաղհանն ու կուլտիվացիան ընկնում են այս առաջին քաղհանից 17—20 որ հետո, վորը տեղի յե ունենում առաջին վեգետացիոն ջրից 5—7 որ հետո:

Այդ ժամանակ բույսի վրա լինում է 4—5 տերև: Մուխոտների զարգացումն այդ շրջանում վոչ պակաս վտանգավոր է, քան առաջին քաղհանի ժամանակ, ուստի այստեղ ևս ամեն մի հապաղում մեծապես իջեցնում է բամբակի բերքատվությունը: Մեզ մոտ այդ աշխատանքներն սկսվում են հունիսի 7—11-ից և վերջանում նույն ամսի 25—30-ին:

Յերրորդ քաղհանը և կուլտիվացիան կատարվում են դրանից մոտ 17—22 որ հետո, այն է հունիսի 26-ից մինչև հուլիսի 14—21-ը:

Չորրորդ քաղհանն ու կուլտիվացիան կատարվում են 18—22 որ 3-րդ քաղհանից հետո՝ մոտավորապես հուլիսի 15—22-ից մինչև ոգոստոսի 2—9-ը: Դրանից հետո՝ յեթե վորոշ արտերում ուժեղ զարգանում են զանդուրդանը, կպչուկը և ուրիշ մուխոտները, ապա պիտի կատարել հինգերորդ մշակություն ևս, վորն սկսվելու յե 3—10 ոգոստոսի և վերջանալու յե նույն ամսի 18—20-ին: Այսպես, ուրեմն, համարյա բոլոր շրջանների համար վերջին քաղհանը տեղի յե ու-

նենում մոտավորապես ոգոստոսի 2-րդ կեսին: Կարող են լինել դեպքեր, յերբ բամբակենին հողի բերրիության կամ ուրիշ պատճառներից վերջին ջրից հետո ել շարքերը չկարողանա լցնել: Նման դեպքերում մուխոտների զարգացումն անխափան կշարունակվի նաև դրանից հետո, ուստի անհրաժեշտ է դրանք հեռացնել ձեռքով (9 ոգոստոսի—5 սեպտեմբերի):

Բամբակի ցանքերի կուլտիվացիան և քաղհանը կարող են տալ զգալի եֆեկտ միայն այն դեպքում, յերբ կատարվում են ժամանակին, առանց ուշացումների, յերբ մուխոտները դեռ նոր են ծիլեր արձակել և զգալի բարձրություն չեն հասել:

Քաղհանի և կուլտիվացիայի թիվը տարբեր հողերում լինում է տարբեր: Ավելի կուլտուրահան և լավ մշակված հողերում բավական է լինում 2—3 քաղհան և համապատասխան չափով ել կուլտիվացիա, իսկ մուխոտներով ուժեղ վարակված և վատ մշակված հողերում այդ ոպերացիաների թիվը հասնում է 4—5-ի:

Համաձայն Հոգեոդկոմատի 1934 թվի հրահանգի՝ բամբակի ցանքերը ջրվելու յեն տարբեր փեմաներով, ըստ վորում ամեն մեկ փեմայի դեպքում մշակման աշխատանքներն ևս կատար-

վելու յեն տարբեր ժամկետներում: Այդ ժամկետները հետևյալներն են.

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ	ԶՐԻ ՍՈՆՏԱՆԵՐԸ		
	1—2—1	1—3—1	2—3—1
1-ին մշակութային	22/5—8/6	20/5—10/6	18/5—6/6
2-րդ „	9/6—25/6	11/6—1/7	7/6—25/6
3-րդ „	26/6—16/7	2/7—21/7	26/6—14/7
4-րդ „	17/7—8/8	22/7—9/8	15/7—2/8
5-րդ „	— —	10/8—20/8	3/8—18/8
Մոլորակ հետազոտություն	9/8—30/8	21/8—3/9	20/8—5/9

Յեկներով մշակման վերոհիշյալ ժամկետներից, յուրաքանչյուր գյուղ, յուրաքանչյուր կոլտնտեսություն ազդեցության ոգնությունը պետք է կոնկրետացնի այդ թվերը և մշակի աշխատանքներն սկսելու և վերջացնելու այնպիսի ժամկետներ, վերոնք համապատասխանեն իրենց պայմաններին:

Քաղհանը, կուլտիվացիան, ջուրը և նոսրացումը կապված են միմյանց հետ սերտորեն: Բոլորը միասին կազմում են ձեռնարկումների ամբողջական սխառում, աշխատանքների կոմպլեկս, վերոնց նպատակն է բերքատվության բարձրա-

ցումը և վերոնց ուղղորդող կապակցված դասավորությամբ միայն հնարավոր է ապահովել այդ ձեռնարկումների մակսիմալ եֆեկտը: Աշխատանքների հենց այդպիսի դասավորության պիտի ձգտի ամեն մեկ ազդրոնում, ամեն մեկ բամբակացան կոլտնտեսական:

Ս. ԿՈՐԱԿՅՈՋՅԱՆ

ԲԱՄԲԱԿԻ ՆՈՍՐԱՑՈՒՄԸ

Վերաբերյալ բամբակի բույսերը համաարաչափ զարգանան և մեկը մյուսին չխանգարեն, պետք է նրանց տրամադրել համաար և անհրաժեշտ չափով տարածություն, վոր կատարվում է նուրազման միջոցով:

Նոսրացման աշխատանքներն անհրաժեշտ է կատարել իր ժամանակին. ժամանակից շուտ կամ ուշ կատարած նոսրացումը տալիս է բացասական հետևանք:

Առաջին քաղհանից անմիջապես հետո (զուգընթաց) պիտի կատարել առաջին նոսրացումը, յերբ բամբակենու վրա զարգացած են լինում 2 խկական տերև: Նոսրացումը չպետք է կատարվի քաղհանի ժամանակ քաղհանավորների կողմից, այլ պետք է կատարեն առանձին փոր-

ձված մարդիկ քաղհանից անմիջապես հետո: Այս աշխատանքը յերբեք չի կարելի ուշացել, հակառակ դեպքում, խտուրթյան պատճառով՝ բամբակի բույսերը միմյանց կխանգարեն, լույսի պակաս կզգան, վորի հետևանքով ուժեղ կերկարեն, կմնան նվազ ու կճուղավորվեն շատ թույլ և քիչ: Այս բոլորի հետևանքը կլինի այն, վոր նման դաշտերից շատ քիչ բերք կստացվի:

Յերկրորդ նոսրացումը պիտի կատարել առաջինից մոտավորապես 14—15 որ հետո, յերբ բամբակենին ունենում ե 4 տերև:


Առաջին նոսրացման ժամանակ ամեն մի բնում պետք ե թողնել 2 բույս և բունը բնից 10—12 սմ. հեռավորության վրա:

Յերկրորդ նոսրացման ժամանակ բները պետք ե մեկընդմեջ հեռացնել այն հաշվով, վոր վերջնականապես բների մեջ մնա 2 բույս, իսկ բների միջտարածությունը 20—25 սմ.: Պարարտ, ուժեղ հողերում բների միջտարածությունը պիտի վերցնել ավելի լայն (վերոհիշյալ թվերի սահմաններում), քան աղքատ հողերում: Միայն շատ ուժեղ հողերում բների հեռավորությունը կարելի յե թողնել 30 սմ.: Այս դեպքում, առաջին նոսրացման ժամանակ, բների միջտարածությունը պիտի թողնել 15. սմ., իսկ յերկրորդ

նոսրացման ժամանակ մեկընդմեջ բները հեռացնելով՝ միջտարածությունը դարձնել 20 սմ.:

Նոսրացման ժամանակ պետք ե հեռացնել վատ զարգացած, նվազ բույսերը, իսկ առողջները թողնել: Նոսրացումն անհրաժեշտ ե կատարել ռաճ խնամով, անպայման պահպանել բների նորմալ հեռավորությունը և բներում չթողնել նշվածից շատ բույսեր: Հեռացվող բույսերը պետք ե հանել արմատով:

Վերը հիշատակած միջշարքային և միջբնային տարածությունները շաբլոն անփոփոխ թվեր չեն. նրանք տեղերում պետք ե կոնկրետացվեն, յեկնելով տեղական կլիմայական և հողային պայմաններից: Խիստ հաշվի պետք ե առնել նաև մշակվող տեսակի առանձնահատկությունները:



Սրբազրիչ՝ Խ. Այվազյան

Հանձնվել է արտադրության 1934 թ. հունիսի 25-ին:

Ստորագրվել է ապրիլի 1934 թ. հուլիսի 4-ին:

Թույլատրված է գլավլիտի լիազոր № 274

Հրատ. № 110, տիրաժ 2000, Գատվեր № 438

ՅԵՐԵՎԱՆ, ՊԵՌՏԻՆՍԿԻ ՑՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50

ՀՀ Ազգային գրադարան



NL0291664

ԳԻՆԸ 10 Կ.

18224

56



Գ. АГАДЖАНЯН
С. КАРАГЕЗЯН

Путем прополки и культивации поднимем урожайность
хлопковых полей